Պարույր Սևակ

Անվերնագիր 31

Իմ հա՛յ ժողովուրդ, դու փոքր ես եղել,
Աղբյո՜ւր ես եղել և ո՛չ թե հեղեղ:
Դու փոքր ես եղել, եղել ես մի բուռ,
Բայց մեծ է եղել ափդ լիաբուռ:
Դու փոքր ես եղել այն մուրճի՛ նման,
Որ ձև է տվել ժայռերին համառ:
Փո՜քրը, բայց նման այն կշռաքարին,
Որ միշտ դրրվել է բարու նժարին
Եվ այդ նժարը ներքև է տարել...
Եկել են դարեր, անցել են դարեր,
Քեզ մատնել սրի, ավերի, գաղթի:
Բայց տիրացել ես այսօր մի բախտի,
Որ մեծ է քո հին վշտերի՛ց անգամ:
Եվ լա՜վ է որքան, ինչ քա՜ղցրը է զգալ,
Որ այսօր, երբ որ աշխարհը համայն
Կշեռքի երկու թաթի է նման,
Դու քո պատմության դասերով բոլոր,
Քո երջանկությամբ ու բախտով քո նոր,
Քո հին անունով, կյանքով դժվարին՝
Ծանր կանգնած ես այն մեծ նժարին,
Որ ծանր է կշռում ո՛չ թե արկերով,

Ո՛չ թե վառոդի, զենքի հակերով,
Ո՛չ թե ավերման կրքով կատաղի,
Ո՛չ թե մայրերի արցունքով աղի,
Այլ երջանկության մշտավառ հրով,
Խաղաղ ծերությամբ, շիկնանքով սիրո,
Հպարտ մայրությամբ, ծիծաղով մանկան,
Ձեռքի սեղմումով բարեկամական...
Այն մեծ նժարին, որտեղ ապագան
Ու պատմությունն են դարձել կշռաքար:

XI.1950թ.
Երևան